**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ**
**ԱՆԴԱՄ ՍԵԴԱ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻՆ**

Հարգելի՛ տիկին Մինասյան,

ի պատասխան Ձեր 04.04.2024թ. գրության՝ տեղեկացվում է, որ Կոմիտասի անվան պուրակի կանաչ տարածքները գտնվում են «Պայծառ երազ» ՓԲԸ-ին վարձակալությամբ հանձնված հողամասի սահմաններում /պայմանագրի ժամկետը լրանում է 21.04.2029թ.-ին/: Պայմանագրով սահմանված վարձակալը պարտավոր է ապահովել տարածքի մաքրման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքները:

Պուրակը գտնվում է անմխիթար և չխնամված վիճակում, որի վերաբերյալ բազմիցս զգուշացվել է վարձակալին: Միաժամանակ տեղեկացվում է, որ 2023թ. «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից բազմաթիվ անգամներ իրականացվել են խնամքի աշխատանքներ՝ վթարային ծառերի հեռացում, ոռոգում, խոտհունձ, վարդերի էտման և ձևավորման աշխատանքներ՝ զերծ պահելով այգին վթարային իրավիճակներից և հիվանդությունների համաճարակներից:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ**